Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասինե 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասը 1-ին կետից հետո լրացնել 1.1-ին և 1.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

1.1) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված քաղաքացիների համար՝ 12 ամիս.

1.2) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված քաղաքացիների համար՝ այդ մասով սահմանված ժամկետներով.ե:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 1.1-ին և 1.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

1.1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա են նաև 27 տարին լրանալուց հետո օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը 12 ամսից պակաս ժամկետով այլ պետությունում զինվորական կամ 18 ամսից պակաս ժամկետով այլընտրանքային ծառայություն անցած կամ այդպիսի ծառայություն չանցած մինչև 37 տարեկան արական սեռի քաղաքացիները: Սույն մասում նշված քաղաքացին սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, և 5-րդ մասերով, 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով և 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում կարող է 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական կամ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետներում այլընտրանքային ծառայություն անցնելու փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար

Հայաստանի Հանրապետության դրամ և ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից:

1.2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքները լրացած և սույն օրենքի կամ 2021 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրած «Զինապարտության մասին» օրենքի կամ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները կարող են մինչև 37 տարին լրանալը, իսկ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 45 տարին լրանալը, իրենց ցանկությամբ զորակոչվել շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ 24 ամիս ժամկետով, կամ 12 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 6 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 1 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով ութ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ՝ եթե չունեն սույն օրենքով սահմանված շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք, կամ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության չզորակոչվել, փոխարենը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի համաձայն օրենքի խախտմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած և համապատասխանաբար 27 կամ 35 տարեկանը լրանալուց հետո սույն օրենքով սահմանված շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի իմաստով օրենքի պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում

Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ում նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում կամ ով «Պաշտպանության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո:ե:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում՝

1) «իսկ» բառից հետո լրացնել «սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝ մինչև 37 տարին լրանալը, և» բառերը.

2) «35 տարին լրանալը,» բառերից հետո լրացնել «իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝ մինչև 45 տարին լրանալը,» բառերը:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասում.

1) 2-րդ կետից հետո լրացնել 2.1-ին և 2.2-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով և ժամկետներով շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած և համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված կամ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցնելու դիմաց սահմանված համապատասխան գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած քաղաքացիները.

«2.2) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներով շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած և համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված կամ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցնելու դիմաց սահմանված համապատասխան գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած քաղաքացիները.ե.

2) 7-րդ կետում .27ե թիվը փոխարինել .37ե թվով:

ՀՈԴՎԱԾ 5. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 27 տարին լրացած և օրենքի պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած կամ 35 տարին լրացած և օրենքի պահանջների խախտմամբ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ*Հոդված* 1. –«Զինվորական ծառայության և~~եւ~~ զինծառայողի կարգավիճակի մասին»~~«~~ 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասը~~մասի~~ 1-ին կետից հետո լրացնել 1.1-ին և~~եւ~~ 1.2-րդ կետերով՝ հետևյալ~~կետեր՝ հետեւյալ~~ բովանդակությամբ.

«1.1) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված քաղաքացիների համար՝ 12 ամիս.

1.2) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված քաղաքացիների համար՝ այդ մասով սահմանված ժամկետներով.»:~~.«:~~

ՀՈԴՎԱԾ*Հոդված* 2. –Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը~~մասից հետո~~ լրացնել 1.1-ին և~~եւ~~ 1.2-րդ մասերով՝ հետևյալ~~մասեր՝ հետեւյալ~~ բովանդակությամբ.

«1.1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա են նաև~~նաեւ~~ 27 տարին լրանալուց հետո օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և մինչև~~եւ մինչեւ~~ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը 12 ամսից պակաս ժամկետով այլ պետությունում~~որեւէ պետության զինված ուժերի կազմում~~ զինվորական կամ 18 ամսից պակաս ժամկետով այլընտրանքային ծառայություն անցած կամ այդպիսի ծառայություն չանցած մինչև~~մինչեւ~~ 37 տարեկան արական սեռի քաղաքացիները: Սույն մասում նշված քաղաքացին– սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, և~~ եւ~~ 5-րդ մասերով, 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և~~եւ~~ 3-րդ մասերով և~~եւ~~ 24-րդ հոդվածի 1-ին մասով– սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում– կարող է 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական կամ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետներում այլընտրանքային ծառայություն անցնելու փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել– երկու միլիոն հինգ հարյուր հազար– Հայաստանի Հանրապետության դրամ և~~եւ~~ ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից:

1.2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքները լրացած և~~եւ~~ սույն օրենքի կամ 2021~~2018~~ թվականի հունվարի 1~~ապրիլի 9~~-ին ուժը կորցրած– «Զինապարտության մասին» օրենքի կամ «Այլընտրանքային ծառայության մասին»~~«~~ օրենքի պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները կարող են մինչև~~մինչեւ~~ 37 տարին լրանալը, իսկ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 45 տարին լրանալը,~~լրանալն~~ իրենց ցանկությամբ զորակոչվել շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ 24 ամիս ժամկետով, կամ 12 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար– Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 6 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով հինգ– միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 1 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով ութ~~տասը~~– միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ՝ եթե չունեն սույն օրենքով սահմանված շարքային կազմի~~,~~ կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք, կամ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության չզորակոչվել, փոխարենը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի համաձայն օրենքի խախտմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած և համապատասխանաբար 27 կամ 35 տարեկանը լրանալուց հետո սույն օրենքով սահմանված շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ– միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի իմաստով օրենքի պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ում նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքայինայլընտանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում կամ ով «Պաշտպանության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայնսահմանված կարգով զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է~~է վերցվել~~ 27 տարին լրանալուց հետո:»:~~:«:~~

ՀՈԴՎԱԾ~~*Հոդված*~~ 3. Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում՝

1) «իսկ» բառից հետո լրացնել «սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝ մինչև 37 տարին լրանալը, և» բառերը.

2) «35 տարին լրանալը,» բառերից հետո լրացնել «իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝ մինչև 45 տարին լրանալը,» բառերը:

ՀՈԴՎԱԾ 4. –Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասում.

1) 2-րդ կետից հետո լրացնել 2.1-ին և 2.2-րդ կետեր՝ հետևյալ~~կետ՝ հետեւյալ~~ բովանդակությամբ.

«2.~~«2.1) սույն օրենքի 19 -րդ հոդվածի 1.1 -րդ եւ~~ 1) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասով~~.2-րդ մասերով~~ սահմանված կարգով և~~եւ~~ ժամկետներով շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած և~~եւ~~ համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված կամ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցնելու դիմաց սահմանված համապատասխան գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած քաղաքացիները.~~.«.~~

«2.2) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներով շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած և համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված կամ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցնելու դիմաց սահմանված համապատասխան գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած քաղաքացիները.».

2) 7-րդ կետում «27»~~«~~ թիվը փոխարինել «37» ~~«~~ թվով:

ՀՈԴՎԱԾ 5. Եզրափակիչ մաս

1. ~~***Հոդված 4.***~~ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 27 տարին լրացած և օրենքի պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած կամ 35 տարին լրացած և օրենքի պահանջների խախտմամբ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՒ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-689-26.10.2023ՊԱ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ- *689'*-26.10.2023-ՊԱ-011/1) ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկ (փոփոխություն, լրացում)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված:	1.1-ին մասով առաջարկվող կարգավորումների առնչությամբ հարկ է նկատի ունենալ, որ զինապարտության ոլորտի խնդիրները սերտ կապի մեջ են գտնվում պետության կողմից իրականացվող ընդհանուր քաղաքականության տարբեր	Չի ընդունվել	Չի ընդունվել

		բնագավառների, այդ թվում՝ միգրացիոն քաղաքականության հետ: Այս առումով, առաջարկվող կարգավորումները պետք է պարունակեն համալիր լուծումներ, որոնք լիարժեք կերպով իրացված չեն ներկայացված նախագծերի փաթեթում: Մասնավորապես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու» մասին օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են խոչընդոտել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար դիմումներ ներկայացնելուն, քանի որ զինվորական ծառայություն անցնելու կամ չծառայելու համար վճարում կատարելու պահանջի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումների քանակը կտրուկ կնվազի: Նշվածը, ընդհանուր առմամբ, հակասում է		

		քաղաքացիության շնորհման ոլորտում պետության որդեգրած ընդհանուր քաղաքականությանը՝ հայրենադարձության և քաղաքացիություն ձեռք բերելու խթանմանը նպաստելու առումով:		
ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված:	1.2-րդ մասում «24 ամիս ժամկետով» բառերը փոխարինել «30 ամիս ժամկետով» բառերով, «12 ամիս» բառերը փոխարինել «15 ամիս» բառերով, «6 ամիս» բառերը փոխարինել «7 ամիս 15 օր» բառերով:	Չի ընդունվել	Չի ընդունվել

ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված:	1.2-րդ մասում հստակեցման կարիք ունի նաև «ով սահմանված կարգով զինվորական հաշվառման է վերցվել 27 տարին լրանալուց հետո» ձևակերպումը՝ իրավական որոշակիության սկզբունքի ապահովման տեսանկյունից: Ուստի առաջարկում ենք նշված բառերը փոխարինել «ով «Պաշտպանության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված:	1.2-րդ մասում անհրաժեշտ է «2018 թվականի ապրիլի 9-ի» բառերը փոխարինել «2021 թվականի հունվարի 1-ին» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	1.2-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել օրենքի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած և զորակոչային տարիքը լրացած քաղաքացիները զինվորական ծառայության զորակոչվելու ցանկություն հայտնելու դեպքում պարտադիր զորակոչվում են զինվորական ծառայության, թե չեն կարող չզորակոչվել՝ ունենալով օրենքով սահմանված տարկետման հիմքեր: Խնդրի լուծման համար առաջարկվում է 1.2-րդ մասը «ութ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ» բառերից հետո լրացնել «՝ եթե չունեն սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից	Ընդունվել է	Ընդունվել է

		ազատման կամ զորակոչից տարկետման հիմք» բառերով:		
ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	1.2-րդ մասն առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Զորակոչային տարիքը լրացած և սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել 15 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:»:	Ընդունվել է մասամբ	Ընդունվել է մասամբ

ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում նոր հոդված	Նախագծում անհրաժեշտ է լրացումներ կատարել նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում՝ «27 տարին» բառերից հետո լրացնելով «, իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված անձինք՝ մինչև 37 տարին» բառեր	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդված	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության 1-ին կետը, նախագծի 3-րդ հոդվածով օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 2.1-ին կետում «1.1-րդ և 1.2-րդ մասերով» բառերը փոխարինել «1.2-րդ մասով» բառերով, իսկ «զինվորական» բառից հետո լրացնել «այլընտրանքային» բառով:	Ընդունվել է մասամբ Նախագծի 3-րդ հոդվածում «զինվորական» բառից հետո լրացվել է «կամ այլընտրանքային» բառերով:	Ընդունվել է մասամբ

ՀՀ կառավարություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդված	առաջարկում ենք 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով. «2. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 27 տարին լրացած և օրենքի պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:»:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	նախագծով առաջարկվող խմբագրությունն իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել նրան, որ վարույթի հանրային և մասնավոր մասնակիցները միատեսակ ընկալում չձևավորեն նշված նորմի կիրառության վերաբերյալ և արդյունքում նշված օրենսդրական նորմը լիարժեք չծառայի իր իրավակարգավորիչ նպատակին: Այդ առումով, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը «կամ» բառից հետո լրացնել «ներկայանալով քրեական վարույթ իրականացնող մարմին՝» բառերով, իսկ «վճարել» բառից հետո՝	Ընդունվել է	Ընդունվել է

		«պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու դիմաց» բառերով:		
Նախագծի հեղինակ	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված	Լրացվող 1.2-րդ մասում «տաս» բառը փոխել «ութ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ՝ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ